

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԻ ՄԱՍԸ՝ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ իս, մենք առաջնահերթ խնդիր պետք է համարենք *"formacion social"*-ի, այսինքն՝ հանրության, կամ «ընկերայնության» ձևավորման նախաձեռնումը՝ որպես «ձևավորված հանրություն» հանդես գալու նպատակով: Շատ քիչ են այն քաղաքական կուսակցությունները, որոնց շարքային անդամները կարող են այդպիսին համարվել, մնացածը դեռ կարիք ունեն ձևավորման:

2. Բազմամյա խորքային ուսումնասիրություններիս հիման վրա հանգել են այն կարծիքին, որ դրան հասնելու միակ ուղին աշխատանքային բնույթի «մասնագիտական կոլեգիալ ընկերակցությունների» (ՄԿԸ) կազմավորումն է: Ի դեպ, հինգ նման ընկերակցություններ արդեն իսկ ստեղծվել են՝ առողջապահական/բժշկականը, ճարտարագիտականը, իրավաբանականը, մարզականը և ոսկերչականը, որոնց օրինակին պետք է որ հետևեն կահույքի ու ընդհանրապես՝ կահավորանքի ոլորտի աշխատողները: Կարծում են, որ հարկ է կազմավորել ևս տասը ընկերակցություններ, որոնց մասին կխոսվի ստորև:

3. Այս հին ու նոր կառույցներում համագործակցության միջոցով ամեն տարի, ի լրումն վարչության անդամների, ժողովրդավարական սկզբունքներով ընտրվում են 3 անհատ պատվիրակներ, «միջմասնագիտական խմբավորման» կազմում ընդգրկվելու համար. ընտրությունն առավելապես կատարվում է ըստ արժանիքների (մանրամասները՝ ստորև): Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ մեկտեղ, այդ պատվիրակներն առաջին անգամ կներկայացնեն հանրության ամենատարբեր շերտերի մարդկանց:

4. Հակառակ դեպքում, գաղափարախոսական կողմնորոշում ունեցող քաղաքական կուսակցությունները և հոգևոր առաջնորդները, առանց նեգրավելու վերոհիշյալ ՄԿԸ-ներին թե՛ Սփյուռքում, թե՛ մայր Հայաստանում, չեն կարող հանդես գալ որպես մեր ժողովրդի իրական մասնակցությունն ու ներկայացուցչականությունն ապահովողներ: Գիշտ է, նրանք կկարողանան հենվել իրենց ավանդական, այսպես կոչված «լուռ մեծամասնության» վրա, որում դիպվածաբար ընդգրկված կլինեն նաև անհատական կամ քաղաքական խմբավորումների ընտրարշավի ընթացքում նրանց սատարած անձինք: Թույլ տվեք ավելացնել, որ այս իրավիճակը հիրավի կշարունակվի, և պետք է որ շարունակվի, սակայն, եթե մենք ձգտում ենք համատարած, զանգվածային մասնակցության, պետք է ընդունենք, որ երեկվա հեռագրիչն այսօր ԻՏ առաջավոր մասնագետ կարող է լինել, առևտրականը՝ բանկային և ֆինանսական մասնագետ, և այլն:

5. Առավել կարևոր մի հանգամանք. եթե այս ՄԿԸ-ները և նրանց օժանդակ մարմինները համալրված լինեն երիտասարդ, քաղաքական կուսակցությունների ձևավորմանն ու սատարմանը մասնակցող ուժերով, մենք ի զորու կլինենք իրականացնել մեկ այլ հիմնականպատակ, այն է՝ բացառել այս թարմ ուժերով լեցուն լայն զանգվածների անտեղի կորուստը: Քանի որ ոչ միշտ է, որ մարդիկ ընդգրկվում են քաղաքական կուսակցությունների շարքերում: Զգալի մի մաս դուրս է մնում:

6. Ա. Այսօր զգացվում է Հայաստանում Սփյուռքի գործերով զբաղվող նախարարության անհրաժեշտությունը, որի գործունեության հիմքում պետք է բացառապես Սփյուռքին առնչվող հարցերը լինեն:

Բ. Անշուշտ հարկ կլինի, որ այդ նախարարությունն իր համագործակից մարմինն ունենա Սփյուռքում, այն է՝ Գերագույն Խորհուրդ: Որևէ այլ անվանում կլինեք անհարիր և անգամ՝ վիրավորական, քանի որ մենք ունենք անկախ Հայաստանի Հանրապետություն, իր խորհրդարանով (Ազգային ժողով), և հուսանք նաև Սենատով՝ մոտակա ապագայում: Ընդսմին, Գերագույն Խորհուրդն է նրա *"raison d'etre"*-ը և պատշաճ կառույցը:

Գ. Մենք պետք է վստահենք պարտականությունների բաշխմանն ըստ փորձառության,

հետևաբար Գերագույն Խորհրդի կառուցվածքում պետք է ընդգրկված լինեն 5 վարչություններ՝ իրավաքաղաքական (նախընտրաբար՝ Ստրասբուրգում, ՀՀ ներկայացուցչության հետ մեկտեղ), տնտեսական (Շվեյցարիայի Ժնև քաղաքում, իր 15/16 մասնագիտական գրասենյակներով, գործադիրը՝ Նյու Յորքում, ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցչության բազայի վրա), որը կծառայի Սփյուռքի կապերը Հայրենիքի հետ ապահովելու գործին, հանրային ծառայությունների/գիտական (Մոսկվա քաղաքում), որն ապագայում կկազմավորվի մյուս չորսի օժանդակությամբ, հայրենադարձության և, վերջապես, հինգերորդը, որը Փառք Աստծո, այժմ ունենք: Սա Սբ. Էջմիածնում է և մշտական կապ է պահպանում Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության հետ, հանդես գալով որպես հոգևոր խորհուրդ: Բոլոր 5 վարչությունները պետք է մշտական կապի մեջ լինեն միմյանց հետ, ինչպես նաև տարբեր երկրներում գործող՝ սփյուռքահայության բոլոր կենտրոնական խորհուրդների հետ:

7. Հիմնական նպատակ՝ վերոհիշյալ կոլեգիալ ընկերակցությունների անդամների և շահագրգիռ բոլոր այլ անձանց կողմից «Ներդրումային համագալին հավատարմագրային հիմնադրամի» հիմնում, որի առանցքում պետք է լինեն մեր մագնատները և նրանց կողմից նշանակված ֆինանսական մասնագետները՝ մասնակիցների ներգրավման համար:

=====

12 մարտի, 2006 թ.
Ֆլորիդա, ԱՄՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ» ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻՆ**

ՏԵՍԱԿԵՏՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՆԱԽԱԲԱՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՆԱԽԱԲԱՆ (ինչո՞ւ ՆԱԽԱԲԱՆ)՝ տե՛ս, խնդրեմ, ստորև:

Հաջորդիվ ներկայացվում են մեր քաղաքական պատմության վերջին շրջանի հիմնական և կարևորագույն այն իրադարձությունները, որոնք ձևավորել են մեր՝ որպես ազգի, ապա և որպես ազգ-պետության, կացությունը:

Առաջինը՝ 1920 թ. Սևրի պայմանագիրը, կնքված էր ենթադրաբար ի օգուտ մեզ, երբ Օսմանյան կայսրությունը դաշնակիցների կողմից կապիտուլյացիայի ենթարկվեց:

Որքան էլ փոքր դաշնակից էր Հայաստանը, որքան էլ ծանր կացության մեջ էր հայտնվել հայությունը Օսմանյան Թուրքիայի կողմից ենթարկվելով նախորդ դարի առաջին ցեղասպանությանը և բռնագաղթվելով Արևմտյան Հայաստանի իր պատմական հողերից, հայ ժողովուրդն անկոտրում պայքար էր մղում Ֆրանսիայում կազմավորված *Հայկական Լեգիոնի* կողքին և այլ ճակատներում՝ նշանակալի ծառայություններ մատուցելով ի շահ դաշնային նպատակների:

Մեր հանդեպ գործադրվեցին այդ վայրագությունները, իսկ մեծ տերությունները, առերևույթ փաստելով մեր ազգի արիությունն ու մեծագույն ջանքերը, խոստացան վերադարձնել մեր պատմական տարածքները՝ հանուն Հայաստանի ամբողջականության

վերականգնման (տե՛ս նույն պայմանագիրը): Այդուհանդերձ, այդ ամենին վիճակված չէր իրականանալ, քանզի մեծ տերությունները պարզապես դրժեցին իրենց խոստումները:

Այդ ընթացքում իր ուժերին ապավինած ու մարտնչող հայությունը, Օսմանյան լծի տակ վեց դար գտնվելուց հետո, 1918 թ. մայիսի 28-ին հաջողեց վերստին հասնելու անկախության՝ սակայն ուժասպառ եղած և իր Չայրենիքի մեկ տասներորդի տարածքում:

Այս նորանկախ հանրապետությունը երկար չդիմացավ. 1921 թ.-ին Աթաթուրքի բանակը, նույն այդ դաշնակիցների օգնությամբ շատ ավելի լավ վերագինված, հարձակվեց Չայաստանի վրա նրա արևմտյան սահմանից, իսկ Կարմիր Բանակը՝ արևելքից: Անկախ Չայաստանն իր զինված ուժերի հետ միասին հայտնվելով այս օղակի մեջ և գոյատևման սուր խնդրի առջև, ընկրկեց և նախընտրեց տեղի տալ Կարմիր Բանակին:

Ու կարծես վերը նշված հիասթափությունները մեզ համար քիչ էին, 1923 թ. հուլիսի 24-ին Շվեյցարիայի Լոզան քաղաքում ևս մեկ, ոչ նպաստավոր պայմանագիր պարտադրվեց մեզ նույն տերությունների կողմից. Սևրի պայմանագիրը կոպտորեն խախտելով, վերջիններս Թուրքիայի հետ կնքեցին Լոզանի խայտառակ պայմանագիրը, որով հայ ժողովուրդը պետք է զրկվեր իր պատմական հողերից:

Տողերիս հեղինակը, հանդես գալով որպես առաջին հայկական Կոնգրեսի անդամ, ապա և ընտրվելով նրա ժամանակավոր գործադիր վարչության կազմում, բոլոր մյուսների հետ միասին իր բողոքն է հայտնել թե՛ Սևրի և թե՛ Լոզանի պայմանագրերի առնչությամբ, դրանց կնքման ճիշտ նույն ամսաթվերին և վայրերում, սակայն 60 տարի անց: Առաջինի դեպքում բողոքն ուղղված էր իրենց իսկ խոստումը դրժած տերությունների դեմ, իսկ երկրորդի դեպքում՝ հրաժարվում էինք ընդունել մեզ բաժին ընկած անարդարացի դատավճիռը, պատճառաբանելով, որ այն ժամանակ մեր ժողովուրդը, օրհասական վիճակում լինելով, ի վիճակի չէր իր ձայնը բարձրացնել:

=====

Այդ ու հ ա ն դ ե ռ ձ,

Օսմանյան Թուրքիայի կողմից իրագործված՝ Չայոց ցեղասպանության 50-երորդ տարեդարձի օրը, 1965 թ. ապրիլի 24-ին, իր պատմական հայրենիքի տասն անգամ կրճատված տարածքի վրա աստիճանաբար վեր հառնելով մոխրից և հաստատվելով նախկին Խորհրդային սոցիալիստական հանրապետությունում և Սփյուռքում, հայ ժողովուրդն իր ուժերն ի մի բերելով մեկ մարդու պես դուրս եկավ ցույցերի, վանկարկելով «մեր հողերը, մեր հողերը» Չայկական ԽՍՀ-ի մայրաքաղաք Երևանում, իսկ սփյուռքահայությունը՝ աշխարհի գրեթե բոլոր խոշորագույն քաղաքներում:

Բազմաչարչար հայ ժողովրդի համար մի նոր դարաշրջան էր սկսվել: Այժմ նա բարեհաջող հաստատվել էր սփյուռքահայությանը հյուրընկալած երկրներում, ինչպես նաև այն հողակտորի վրա, որը մնացել էր նրա Չայրենիքից, ուր նա հանդես էր գալիս որպես ԽՍՀՄ-ի ՉԽՍՀ կոչվող ազգ-պետություն:

Ապա հաջորդեցին բազմաթիվ նշանակալից իրադարձություններ՝ ինչպես հայության փոքրացած Չայրենիքում, այնպես էլ հայորդիներին օթևանած այլ երկրներում, և դրանք վերստին զարգացան ի վնաս մեզ:

Խորհրդային Չայաստանում պետական մեքենան ճնշում էր գործադրում, մեզ՝ որպես համահարթեցված խորհրդային քաղաքացիների վերածելու ուղղությամբ, ինչը տեղի էր ունենում տարբեր ուղիներով նաև սփյուռքահայությանը օթևանած այլ երկրներում: Նույն գործընթացն այժմ էլ շարունակվում է Սփյուռքի երկրներում, ճիշտ է՝ ավելի փոքր

ծավալով, շնորհիվ հայալեզու դպրոցների գոյության, հայկական եկեղեցու, քաղաքական կուսակցությունների, բարեգործական միությունների և այլ կազմակերպությունների, որոնց պարտավոր ենք մեր երախտիքը:

Այդուհանդերձ, մենք շարունակեցինք մեր ուղերձ(ներ)ը հղել ՄԱԿ-ին, վերը հիշատակված տերություններին և այլոց, ընդամենը դեմ առնելով նրանց խլությանը: Ապա 70-ականներին, մեր հուսախաբված հայ երիտասարդության խմբերը, հույս ունենալով արձագանքի արժանանալ և հայկական հարցը բարձրացնել ի լուր աշխարհի, ընտրեցին մարտնչելու ուղին՝ հակառակ մեր ազգի խաղաղասեր դիրքորոշումներին ու բնավորությանը: Սա մի նոր դիմադրության ազդանշան էր, հատկապես Սփյուռքում, ընթուստացում ընդդեմ պարտադրված լռության և ընկճման: Այնուամենայնիվ, նրանք դադարեցրին պայքարի այս ձևը՝ փոխարենը միանալով Լեռնային Ղարաբաղում մարտնչող ազատամարտիկներին, որպեսզի միասին հաղթեն այնտեղ՝ մեզ պարտադրված պատերազմում:

Այնուհետև, գրեթե միաժամանակ, տեղի ունեցան այլ իրադարձություններ, ինչպիսիք էին 1988-ի աղետալի երկրաշարժը Հայաստանում, Խորհրդային Միության փլուզումը, երբ ԼՂ-ի հայությունը, ազերիների երկարամյա ու դաժան իշխանության ներքո գտնվելուց հետո, հենվելով ժամանակի խորհրդային օրենքների վրա, օրինական ճանապարհով, քայլ առ քայլ հռչակեցին իրենց ինքնորոշման (անկախության) իրավունքը, որին ի պատասխան ազերիները գրեթե անմիջապես սկսեցին ջարդերը Սումգաիթում և Բաքվում, բռնի տեղահանության ենթարկելով այնտեղ ապրողներին և դրանով իսկ դրդելով Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնական խաղաղ բնակչությանը՝ դեպի ինքնապաշտպանական պատերազմ, որը պսակվեց հաղթանակով և մեր ժողովրդի ձերբազատմամբ ազերիների իշխանությունից:

* Ուրեմն, ո՞րն է այս նախաբանի իմաստը, որն անդրադարձ է վերջին 90 տարիների իրադարձություններին, ևս մի հիշեցում, երբ մեզանից մեծ մասը քաջատեղյակ է դրանց: Պարզապես՝ ընդունենք ինքներս մեր առջև, որ մենք իբրև ազգ ենթարկվել ենք խաբեության, դավաճանության և մեր իրավունքների ոտնահարման, կրկին ու կրկին, և որ մենք պետք է հույս դնենք՝ հի մ ն ա կ ա ն ու մ ինքներս մեր վրա:

Հարգենք և սիրենք մյուսներինՆույնքան, որքան նրանք՝ մեզ: Վստահությունը ոչ միշտ է արդարացված:
=====

Նախաբան

Այդ ընթացքում հայ ժողովրդի երկու հատվածները, բարեբախտաբար բոլորիս համար, 1991-ին Հայաստանի երրորդ հանրապետության անկախության հռչակումից հետո, ինչպես Հայաստանում, այնպես էլ մեզ հյուրընկալված երկրներում զարթոնք են ապրել, որը դրական ազդեցություն է ունեցել թե՛ համայն սփյուռքահայության և թե՛ հայրենի հողում ապրող հայության վրա:

Բանն այն է, որ երևան են եկել մի շարք նշաններ, որոնք ոգեշնչում են հայ ժողովրդի ծառայիս ու շատ ուրիշներին, ովքեր կշռադատում, ծրագրում ու ջանքեր են գործադրում առանձին բաղադրիչների խմբավորման մեթոդի կիրառման ուղղությամբ, ինչը շատ ավելի ցանկալի տարբերակ է, քան կենտրոնախույս և դիպվածային հիմքերով կազմավորված

միություններն ու կազմակերպությունները, որոնցից յուրաքանչյուրը գործում է իր հայեցողությամբ:

Ուրեմն, պե՞տք է արդյոք ընդունենք 150-ամյա հայկական սահմանադրությունը որպես *'fait accompli*, կամ անփոփոխ իրողություն, եթե կուզեք, անտեսելով այն հանգամանքը, որ այն ձևավորվել է Կոստանդնուպոլսում, Օսմանյան բիրտ իշխանության պայմաններում. մի հնացած իրողություն՝ անհարիր ազատ, ժողովրդավարական երկրներում բնակվող մերօրյա սփյուռքահայերի դիմամիկ էության հետ: Թե՞ հարկ է թողնել այս «սահմանադրությունը» միմիայն հոգևորականությանը և նրա շարքային հետևորդներին: Քանզի հայկական եկեղեցին, անտարակույս, մեկն է այն հենասյուներից, որոնք պետք է որ սատարեն 5 վարչություններից մեկին (այդ մասին՝ ստորև), այն է՝ «Յոգևոր Գերագույն Խորհրդին»:

Պահն է, որ մենք ունենանք «ժամանակակից Հայոց Սփյուռքի նոր սահմանադրություն», որը կբավարարի այն վիթխարի խմբավորումներին, որոնք հիմնականում բաղկացած են զանազան ոլորտներում աշխատող, կրթված ու վերապատրաստված մասնագետներից կամ միավորված են նրանց շուրջ: Ինչպես և մեր գոյություն ունեցող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից, գումարած մեկական ներկայացուցիչ մեր երեք հիմնական հոգևոր թեմերից:

Առավել հրատապ է գործել այսօրվա իրավիճակում, երբ մեր վերածնված նոր հանրապետություն(ներ)ը զգում է համայն Սփյուռքի ռեսուրսների կարիքը, երբ մեր երրորդ Հանրապետության անկախության վերահաստատումից 15 տարի հետո, կրկին նրա երկու հարևանները՝ Թուրքիան և Ադրբեջանը, մշտական սպառնալիք են ներկայացնում մեր հայրենի երկրի գոյության համար: Հետևաբար,

Մենք պետք է աջալրջորեն քննենք անհատի, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և/կամ այլ կազմակերպությունների, համագումարների, միությունների և այլոց արդյունավետությունը, նրանց գործունեությունը, առանձին ծրագրերն ու իրականացված միջոցառումները, որոնք գուցե և իրականացվել են լավագույն մղումներով, սակայն իրենց բնույթով լոկ կենտրոնախույս ջանքեր են, հակառակ այն կազմավորմանը, որն ի մի կբերի մեր «մասնագիտական կոլեգիալ ընկերակցությունների» ներկայիս հուժկու խմբավորումները, որոնցից հինգն արդեն իսկ հայտնվել են ասպարեզում, իսկ ևս տասը..... հուսանք, կհաջողենք ավելացնել նրանց թվին:

Կանոնադրության նախագիծ

Այս մեկը պետք է լինի մեր ժողովրդի հիմնարար իրավունքների վրա հիմնված սոցիալ-տնտեսական վերնաշենք, որը կապահովի նրա մասնակցությունը և ներկայացուցչականությունը վերը նշված «մասնագիտական կոլեգիալ ընկերակցությունների» հուժկու խմբավորումներից՝ ժողովրդի կողմից կամավոր ու ժողովրդավարական սկզբունքներով ընտրված պատվիրակների միջոցով:

Այդուհանդերձ, մենք մեր հարգանքն ենք հավաստում վերը հիշատակված արդեն հիմնադրված կազմակերպություններին, մաղթելով նրանց մեծ հաջողություններ, ինչպես և ցանկացած այլ նման կազմակերպություններին, որոնք հնարավոր է ձևավորվեն ապագայում, քանզի մեզանում կան այդպիսիք, որոնք մշտապես ձգտում են հանդես գալ նոր նախաձեռնություններով:

Հարկ ենք համարում ընդգծել, որ սույնով նախատեսված ենք հիմնականում ներգրավել այն մարդկանց բազմությունը, որոնք առայժմ անկուսակցական են և չեն մասնակցում այլևայլ միությունների և կազմակերպությունների աշխատանքներին, և որոնք մինչև վերջերս հանդես էին գալիս «լուռ մեծամասնություն» վիրավորական պիտակի ներքո, իսկ հիմա մասնագիտացած են 15/16 ոլորտներում: Նպատակը: Համալրել նրանց կազմը, ինչը կնպաստի Սփյուռքի համախմբման և համագործակցության հիմքերի վերակառուցմանը, նաև նպաստելով

Հ ա յ ո ց Ս փ յ ու ռ ք ի Գ եր ա գ ու յ ն Խ ո թ հ թ դ ի շ ուրջ միավորման գաղափարին:

- Հետևաբար, եթե մենք զգում ենք նախորդ պարբերության մեջ նշված կարգով Սփյուռքի վերակառուցման անհրաժեշտությունը, ապա մենք անմիջապես պետք է՝
- Հռչակենք, ճկունություն ցուցաբերելով ու հանձն առնելով ամենաառաջին քայլը, որ՝
- երկակի անդամակցությունը պետք է թույլատրելի համարվի հետևյալ «մասնագիտական կոլեգիալ ընկերակցություններում», այսինքն՝ սկսած գոյություն ունեցող քաղաքական կուսակցություններից և ինստիտուտներից մինչև հետևյալ մասնագիտական ոլորտների շարքային անդամները.

1. առողջապահություն/բժշկություն, 2 ճարտարագիտություն և գիտություններ, 3.իրավագիտություն, 4. սպորտ, 5. ոսկերչություն (արդեն ստեղծված է): Ենթակա են կազմավորման հետևյալները՝ 6. տրասպորտ և ճանապարհորդություն, 7.բանկային գործ և ֆինանսներ, 8. արդյունաբերություն և հանքեր, 9. գյուղատնտեսություն, 10. սնունդ և քեթրինգ, 11. կրթություն և մշակույթ (սա պետք է միացյալ լինի, ինչպես մարզականը), 12. բնապահպանություն/անտառային տնտեսություն, 13. հաղորդակցություն, ԻՏ, 14. շինարարական ոլորտ, 15.կահույք/կահավորանք, 16. մամուլ/գովազդ, և միգրացե մեկերկու այլ ոլորտներ ևս:

Բացի նրանց վարչություններից, որպես նորամուծություն (հայ ժողովրդի ծառայիս կողմից) առաջարկվում է «բյուրեղացման» մեթոդի կիրառմամբ ընտրել 3 անհատ-պատվիրակների, որոնցից յուրաքանչյուրն իր որոշակի արժանիքով. մեկը՝ ֆինանսապես առավել ակնառու, մյուսը՝ մասնագիտական առումով, իսկ երրորդը՝ մշակութային ոլորտում մեծ ձեռքբերումների հասած (ազգային, միջազգային և ցանցային համագործակցության ունակությամբ), այնպես, որ մեկը մյուսին լրացնեն: Յուրաքանչյուր ընկերակցությունն ամսական մեկ անգամ առանձին հավաք պետք է ունենա, իսկ նրանց պատվիրակները կհանդիպեն որպես միջմասնագիտական պատվիրակներ, եռամսյակը մեկ անգամ, գոյություն ունեցող հայկական քաղաքական կուսակցությունների և հոգևորականության պատվիրակների հետ մեկտեղ: Այսպիսով, հայաշատ շրջաններում, օրինակ՝ մարզերում/նահանգներում նպատակահարմար կլինի ձևավորել երկար սպասված կենտրոնական մարմիններ (երիտասարդների համար օժանդակ կառույցներով) և ապա սրանց միջոցով պատվիրակներ կնշանակվեն սփյուռքահայ համայնքի տվյալ երկրում գործող կենտրոնական խորհրդի համար: Սրանք, իրենց հերթին, նույնպես պատվիրակներ կընտրեն՝ Գերագույն Խորհրդի հետևյալ հինգ (5) վարչություններին ներկայացնելու համար.

Ա . իրավաքաղաքական վարչությանը Ստրասբուրգում, ՀՀ ներկայացուցչի հետ համատեղ, Բ. գործադիր վարչությանը, Նյու Յորքում, ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցչի հետ համատեղ, Գ. սոցիալական/գիտականին, Մոսկվայում (որը նաև հանդես կգա որպես առաջիկա հայրենադարձության կատալիզատոր/կազմակերպիչ), Դ. հոգևորին, Սք. Էջմիածնում, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության հետ միասին, Ե. տնտեսականին, Շվեյցարիայի Ժնև քաղաքում (մասնագիտական ոլորտների 15/16 գրասենյակների հետ):

Այս հիմնգերորդ վարչությունը իր վրա կվերցնի

«Ներդրումային ազգային հավատարմագրային հիմնադրամ» բաժնետիրական ընկերության կազմակերպումը:

Վերջինիս միջուկը, ինչպես նշել են armeniadiaspora.com conference News ինտերնետային էջի pre conf հատվածում տեղադրված իմ հոդվածում, հուսանք, կապահովվի մեր ֆինանսական մագնատների կողմից, ֆինանսական փորձագետների նշանակման միջոցով, իսկ իրապես խրախուսվելու դեպքում մեր բոլոր մասնագիտական կոլեգիաների անդամները (և ոչ միայն նրանք) ըստ ամենայնի հակված կլինեն որպես «բաժնետերեր» մասնակցելու այս կուռ, ազգանվեր ձեռնարկմանը, այլապես, մինչև օրս իրարից անկախ գործող, հիմնականում անհատ ներդրողները կշարունակեն գործել ինչպես գործել են, ժամանակ առ ժամանակ հակադրվելով միմյանց գործունեությանը, մի բան, որ նորմալ է կայուն ու հաստատված տնտեսակարգերում, սակայն մեր ջլատված Հայրենիքում այնքան էլ ցանկալի չէ: Հարկ է, որ մենք թիմային աշխատանք ապահովենք առևտրի/արդյունաբերության բոլոր բնագավառներում:

«Հիմնադրամը» ծավալուն կառույց է լինելու և կառավարվելու է նրա միջուկը կազմող վարչության նշանակած ֆինանսական մասնագետների կողմից, ներդրումներ է կատարելու շահութաբեր միջազգային պետական արժեթղթերի և այլնի մեջ: Ու նաև տոկոսագումարներ է վաստակելու բոլոր ներդրողների օգտին, որոշակի պահուստային միջոցներ է գոյացնելու՝ կապիտալի մեծացման, նաև ՀՀ/Արցախի/Ջավախքի համար աջակցության ծրագրերի, պետության երաշխավորմամբ և գրավադրման կարգով շատ ցածր տոկոսադրույքով վարկային ծրագրերի իրականացման համար: Եվ/կամ ցանկացած հայկական համայնքի առջև ծառայած խնդրի լուծման, կամ, Աստված մի արասցե, աղետի պարագայում օժանդակության համար:

Հավերժական «ազգային հիմնադրամ» հարկերից ազատման հնարավորությունը ընձեռած երկրում: Թվով 15/16 «մասնագիտական կոլեգիալ ընկերակցությունների» ներկայացուցիչները, գործելով նրա համապատասխան գրասենյակներում, հանձն կառնեն նաև հետևյալի կազմակերպումը.

Ամեն մի առանձին մասնագիտական բնագավառը ներկայացնող համապատասխան խմբի ուղևորություններ, ըստ ժամանակացույցի, ժնկից և սփյուռքահայության բոլոր համայնքներից դեպի ՀՀ/Արցախ/Ջավախք՝ համագործակցելու համար հայրենակից գործընկերների հետ, որոնք իրենց հերթին նույն այդ մեխանիզմների կիրառմամբ կներգրավվեն համագործակցության մեջ:

Վերը ներկայացված բոլոր խնդիրների լուծման համար՝

- Առաջին և կարևորագույն խնդիրը, հիրավի, այս վիթխարի համայնքների «հանրային ձևավորումն» է, ինչը բացարձակ անհրաժեշտություն է և կարող է իրականացվել քայլ առ քայլ մերձենալով մինչև օրս ցաք ու ցրիվ եղած «կոլեգաներին» Հայոց Սփյուռքում, որը, ցավոք, դեռևս բավարար չափով սոցիալապես ձևավորված չէ, այդ մերձեցումը իրականացնելով «ահատ-անհատ» և «անհատ-խումբ» սկզբունքով: Սակայն այս նպատակին կարելի է հասնել այն դեպքում, եթե բարի կամքի այս բոլոր մարդիկ ի մի գան, շփվեն, սովորեն միմյանցից ու համատեղեն իրենց ջանքերը համազգային նպատակների շուրջ: Որպես նպատակին հասնելու ուղի կարելի է դիտել աշխատանքային խմբերի կազմավորումը, որոնք *esprit de corpse* (ընդհանրական շահերի) սկզբունքով կծառայեն համաձուլման գաղափարին, ավելի մեծ հավանականությամբ հաջողության կհասնեն իրենց առջև դրված խնդիրներում, ինչպիսիք են, ասենք,

«ազգային հավատարմագրային հիմնադրամի» միջոցով միասին ներդրումներ կատարելը, շահաբաժին ստանալը, ինչպես նաև միջոցների որոշակի տոկոսը հայաստանյան ձեռնարկությունների վարկավորմանն ուղղելը:

Մասնագետների խմբերի կազմավորման միջոցով մենք զգալի առաջընթաց կունենանք և օգնած կլինենք երիտասարդ մասնագետների օժանդակ կառույցների հիմնադրման գործին, և այդ ընթացքում հնարավոր կլինի թարմ ուժեր և արյուն ներմուծել համազգային գործունեության ասպարեզ, որն, ավաղ, այսօր դեռ անլիարժեք է:

- համայն ազգի տեսանկյունից միահամուռ մասնակցություն և ներկայացուցչություն նախատեսելով, այն նաև նպատակ ունի զարգացնել համախմբման նոր հայեցակարգ: Կազմակերպչական թիմային աշխատանք, կազմակերպված Սփյուռքի և նրա ողջ ռեսուրսների առանցք:

Հաճախակի հնչող հարցեր.

Հարց. *Արդյոք այս ծրագրված համաշխարհային վերակազմավորումը, որի արդյունքում պետք է ստեղծվի Գերագույն Խորհուրդ իր հինգ վարչություններով, նպատակ ունի՞ փոխարինել ներկայումս գոյություն ունեցող որևէ հայկական կազմակերպությանը:*

Պատասխան. Բնավ: Նախևառաջ, այն նպատակ ունի համախմբել 15/16 բնագավառների բոլոր մասնագետ - կոլեգաներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն մասնակցել կամ չեն ցանկանում սատարել քաղաքական կուսակցություններին և/կամ այլ կազմակերպություններին: Նաև նրանց կազմակերպել արդեն խմբերի ներսում, և հետո, բյուրեղացման մեթոդի գործադրմամբ, ներկայացնել նրանց պատվիրակներին տեղական (նախատեսված) կենտրոնական մարմիններին, ապա՝ մայրաքաղաքների կենտրոնական խորհուրդներին, ուր նրանք կմասնակցեն այն աշխատանքներին, որոնց մինչ այժմ հասու են եղել միայն քաղաքական կուսակցությունների և հոգևոր առաջնորդների պատվիրակները: Եվ ապա, բոլորով միասին ջանքեր գործադրել Սփյուռքի Գերագույն Խորհրդի ու նրա 5 վարչությունների կայացման համար:

Հարց. Իսկ ինչո՞ւ է պետք «Ներդրումային ազգային հավատարմագրային հիմնադրամը»: Սա արդյոք չի՞ դառնա մեկը բազմաթիվ այլ հիմնադրամներից:

Պատասխան. Իր հիմնադրվելուց հետո Համահայկական Հիմնադրամը հետամուտ է եղել Հայաստանի Հանրապետության և Արցախի օգտին աջակցության ծրագրերի կազմակերպման խնդրին, իր գործունեության սկզբնական փուլում՝ առաջին օգնության տեսքով, իսկ այժմ անցել է այլ առաքելությունների իրականացմանը՝ ըստ երևան եկող կարիքների: Հետևաբար, սա մի հիմնադրամ է, որը համալրվում և ծախսվում է ամբողջապես այն ծրագրերի համար, որոնք պատշաճ կերպով մշակվում են նախապես, ինչպես նաև ընթացքում, ըստ անհրաժեշտության առաջացող խնդիրների լուծման համար: Առաջարկվող «Ներդրումային ազգային հավատարմագրային հիմնադրամը», սակայն, ձգտելու է կապիտալ ներգրավել ներդրումային հիմունքներով և շահաբաժիններ է վճարելու ներդրողների/բաժնետերերի մայր գումարների հաշվարկով: Այդ ընթացքում, նրա հիմնական նպատակն է լինելու ֆինանսական միջոցների փոխատվությունը ՀՀ/Արցախի/Չավախքի ձեռնարկություններին, թե՛ փոքր, թե՛ միջին, և այլն, միաժամանակ խթանելով «կոլեգիալ ընկերակցությունների» անդամներին, որպեսզի նրանք խմբերով կամ հնարավոր է՝ տեղական գործընկերների հետ միասին ներդրումներ կատարեն համապատասխան բնագավառների զարգացման օգտին:

=====

Հարց. Այդ դեպքում, որո՞նք են Ձեր կոնկրետ «առաջարկությունները» *Հայաստան – Միջուկ* 3-րդ համաժողովի պլանավորման հանձնախմբին:
Ես կառաջարկեի բացման մի կարճ արարողություն՝ ոչ թե Համալիրում տեղի ունեցող մեծ հանդիսության նման, այլ Կառավարական շենքում, միայն մասնակիցների առաջին խմբի համար (տե՛ս ստորև), ապա հետևյալ զարգացմամբ.

Պատասխան. Սկսած 2006 թ. մայիսի վերջից, առաջին պատվիրակությունը (հրավիրված Սփյուռք) պետք է ներառի հետևյալ խմբերից.

- Ա. 1. Բանկային և ֆինանսական խումբ, 2. Իրավական (օրենքներ և կարգուկանոն) 3. Տրանսպորտ և ճանապարհորդություն, 4. Հաղորդակցություններ, ԻՏ.
- Բ. Հունիսի կեսեր: 5. Հանքեր և արդյունաբերություն, 6. Ճարտարագետներ և գիտություններ, 7. Գյուղատնտեսություն, 8. Առողջապահություն/բժշկություն.
- Գ. Հուլիսի սկիզբ: 9. Բնապահպանություն և անտառային տնտեսություն, 10. Սնունդ և քթորինգային ծառայություններ (սա ներառում է հյուրանոցային համակարգը), 11. Կահույք և կահավորանք, ներառում է ոսկերչությունը, 12. Սպորտ և երիտասարդություն: Դ. Հուլիսի կեսեր: 13. Շինարարական ոլորտի խումբ, 14. Մամուլ և գովազդ, 15. Կրթություն և մշակույթ:

Ինչպես տեսանք վերևում, այս խմբերից յուրաքանչյուրը կարող է գործել ինքնուրույնաբար և համագործակցել ՀՀ-ի և Արցախի/Ջավախքի իրենց գործընկերների հետ: Ես կառաջարկեի, որ կազմակերպվեն հնգօրյա աշխատաժողովներ, որոնցից առաջին չորսը՝ պլանավորման և որոշումների կայացման նպատակներով, իսկ 5-րդ, եզրափակիչ օրը միանալով մյուս երեք մասնագիտական խմբերի հետ՝ իրենց արդյունքների և այլ ինֆորմացիայի փոխանակման համար:

Ի վերջո, սա աշխատանքի/համագործակցության բաշխման մոտավոր ուրվագիծ է, իսկ մնացածը կարող է ծրագրվել հարգարժան Պլանավորման Հանձնախմբի կողմից՝ այն երկու ամիսների ընթացքում, որոնք մնացել են մինչև սփյուռքահայ մասնագետների առաջին ալիքի մուտքը Հայաստան՝ իրենց հայրենակից գործընկերների կողքին Մայր Հայրենիքում իրենց ուժերն ի սպաս դնելու համար:

Ապա, ինչպես «առաջարկվել էր» իմ նախորդ, 2002-ի հոդվածում, որը մինչ օրս տեղադրված է armeniadiaspora.com conf.News, չորս խմբերից յուրաքանչյուրի ընդհանուր ժողովի վերջին օրը, յուրաքանչյուր մասնակից կատարում է իր կամավոր ավանդը՝ ցանկացած գումարի չափով, որը կարող է նաև բաժնեմաս համարվել, հօգուտ համազգային բանկային հաշվի (որը հարկ կլինի բացել), այդպիսով ստեղծելով «Համազգային ներդրումային հավատարմագրային հիմնադրամի» միջուկը:

Վերջին, բայց և կարևոր մի նկատառում. Ինչպես 2002-ի նույն հոդվածում էր առաջարկվում, հարկ կլինի ավելի շուտ ընտրել, այլ ոչ՝ նշանակել, մի ենթակոմիտե, որն այնուհետև կդիմի և՛ Սփյուռքի, և՛Մայր Հայրենիքի մագնատներին՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում մայրական «հավատարմագրային հիմնադրամի» օգտին՝ ն եր դ ու մ ն եր կատարելու առաջարկությամբ:

Վրիպումներն ու բացթողումները ենթակա են անտեսման:

=====

Տե՛ս նաև, խնդրեմ, իմ «Ընտրական համակարգի և կառավարման նոր հայեցակարգ» հոդվածը՝ տպագրված ԱՄՆ-ում լույս տեսնող «Արմինյըն Լայֆ» ամսագրի 2005 թ. հունիս

30-հուլիս 6 համարում, որը գրանցված է նաև Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի հեղինակային իրավունքի գրասենյակում:

Համահայկականի սիրո,
Կայծակ Փալանջյանի մատուցմամբ